ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

(11.07.2017թ. կնքված կենտրոն նոտարական տարածքի նոտար Հայկուհի Հարությունյանի կողմից վավերացված, սեղամատյանի 2495 համարի տակ գրանցված անշարժ գույքի վարձակալության պայմանագրում փոփոխություն կատարելու մասին)

Քսանութը սեպտեմբերի երկու հազար տասնյոթ թվական
28.09.2017թ.

Հայաստանի Հանրապետություն, Երևան

ՀՀ ԱՆ դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը ի դեմս Ծառայության Տնտեսական բաժնի պետի տեղակալ, արդարադատության փոխգնդապետ Ալեքսանդր Խաչատրյանի (ծառայողական վկայական թիվ 04/777, անձնագիր՝ AM0360830, տրված՝ 06.07.2011թ., 011-ի կողմից), որը գործում է 10 հուլիսի 2017թ. տրված լիազորագրի հիման վրա (այսուհետ՝ **Վարձակալ**), մի կողմից և «Միկշին» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ **Վարձատու**), ի դեմս ընկերության լիազորված անձ՝ **Տիգրան Հմայակի Գևորգյանը** (ծնված՝ 30.11.1995թ. նույնականացման քարտ՝ 008485401, տրված՝ 26.07.2016թ., 049-ի կողմից, հաշվառված՝ ՀՀ, Կոտայքի մարզ, թ. Հրազդան, Կենտրոն 10 շենք, 17 բն.),, այսուհետ միասին՝ **Կողմեր**, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1. Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին **11.07.2017թ. կնքված կենտրոն նոտարական տարածքի նոտար Հայկուհի Հարությունյանի կողմից վավերացված, սեղամատյանի 2495 համարի տակ գրանցված անշարժ գույքի վարձակալության պայմանագրում** (այսուհետև՝ Պայմանագիր) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1.1.1. Պայմանագրի 2.1. կետը փոփոխել և շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Սույն պայմանագրի դրույթները տարածվում են կողմերի միջև 2017թ փետրվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա և գործում են մինչև 1 օգոստոսի 2017 թվականը»:

1.1.2. Պայմանագրում ավելացնել նոր 13-րդ գլուխ հետևյալ խմբագրությամբ.

«13 Հատուկ պայմաններ»

« 13.1. Վարձատուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Վարձակալը, Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասինե ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Վարձատուի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վարձատուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

13.2. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Վարձակալը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային

պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Վարձակալը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Վարձակալի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

13.3. Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել՝ կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել՝ նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:
13.4. Եթե տվյալ տարում նախատեսված չեն կամ նախատեսված են ավելի քիչ ֆինանսական միջոցներ, քան պայմանագրի գինն է, ապա կողմերի հետագա պարտավորությունները շարունակվում են համաձայնագիր կնքելու միջոցով:
13.5. Եթե Վարձակալը պայմանագրով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված, և պայմանագրով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Վարձակալը Վարձատուին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը: Ընդ որում, պայմանագրի արդյունքը հանձնելու փաստն ամրագրվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:
13.6. Վարձակալը սույն պայմանագրում նախատեսված վարձավճարի կետանցի դեպքում յուրաքանչյուր օրվա համար Վարձատուին վճարում է տույժ՝ չվճարված վարձավճարի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով: Վարձավճարի չվճարման յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար Վարձակալը վճարում է տույժ պայմանագրի գնի 0,05 տոկոսի չափով: Ընդ որում, տույժը հաշվարկվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ: Տույժի վճարումը կողմերին չի ազատում պայմանագրով նրանց վրա դրված պարտավորությունները կատարելուց:

13.7. Եթե Վարձակալը պայմանագիրը դադարելուց հետո չի վերադարձրել Օբյեկտը կամ այն վերադարձրել է ժամկետի խախտմամբ, ապա Վարձատուն իրավունք ունի վարձավճար պահանջել կետանցի ամբողջ ժամանակահատվածի համար: Եթե նման վճարն ամբողջովին չի մարում Վարձատուին պատճառված վնասները, նա կարող է պահանջել հատուցելու դրանց մնացած մասը:

13.8. Եթե պայմանագրի կնքումից հետո ի հայտ են գալիս թերություններ, որոնք Վարձատուն չի նշել սույն պայմանագիրը կնքելիս, կամ նախապես հայտնի չի եղել Վարձակալին, Վարձատուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 3.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Վարձատուն պատասխանատվություն չի կրում Օբյեկտի այն թերությունների համար, որոնք նա նշել է սույն պայմանագիրը կնքելիս, կամ նախապես հայտնի է եղել Վարձակալին»:

1.1.3. Պայմանագրի մնացած կետերը թողնել անփոփոխ:

2. Այլ պայմաններ

2.1. Կողմերի միջև ձեռք բերված՝ սույն համաձայնագրին հակասող բոլոր նախկին պայմանավորվածությունները՝ սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից դադարում են գործել:
2.2. Սույն Համաձայնագրով կարգավորվող դրույթների առումով Համաձայնագրի և Պայմանագրի դրույթների միջև հակասություններ ծագելու դեպքում կիրառվում է սույն համաձայնագիրը:
2.3. Համաձայնագիրը կարող է փոփոխվել կամ լրացվել Կողմերի համաձայնությամբ:
2.4. Կողմերի պատասխանատվությունը որոշվում է Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրությանը համապատասխան:
2.5. Սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից Պայմանագրի անբաժանելի մասն է:
2.6. Սույն Համաձայնագրի, ինչպես նաև Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է ընդհանուր իրավասության դատարանի քննությանը:
2.7. Սույն համաձայնագիրը կնքված է հայերեն լեզվով, 4 (չորս) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, 1 օրինակ տրվում է սույն համաձայնագիրը վավերացնող նոտարին, մեկ օրինակ՝ Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին:
2.8. Համաձայնագրերի օրինակների միջև հակասություն առաջանալու դեպքում նախապատվությունը տրվում է նոտարական գրասենյակում պահվող օրինակին:

3. Կողմերի հասցեները և ստորագրությունները

Վարձատու	Վարձակալ
«ՄԻԿՇԻՆ» ՍՊԸ	ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայություն
ՀՀ, Երևան, Բայրոնի 4, բն. 11	Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Հալաբյան 41Ա
ՀՎՀՀ 01561878 Տնօրեն Ս. Խաչատուրյան	
Լ/ա	Լ/ա

Նոտարական ակտի կոդ: 508-20170928-117-1774315
Նոտարական ակտի գաղտնագիր: CD1NA0

Երկու հազար տասնյոթ թվականի սեպտեմբերի քսանութին, սույն համաձայնագիրը պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին վավերացվել է «ԿԵՆՏՐՈՆ» նոտարական տարածքի նոտար՝ ՀԱՅԿՈՒՀԻ ԳՐԻԳՈՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՍ կողմից: Համաձայնագիրը պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին կողմեր ստորագրել են իմ ներկայությամբ: Համաձայնագիրը ստորագրած անձանց ինքնությունը ստուգված է, նրանց գործունակությունը՝ պարզված, ինչպես նաև իրավաբանական անձանց իրավունակությունը, նրանց ներկայացուցիչների լիազորությունները ստուգված են:
Գրանցված է գրնացամատյանում՝ 3721 ով
Գանձված է պետական տուրք երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար ութ հազար ՀՀ դրամ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Հայկուհի Հարությունյան